ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
24 ՀՈՒՆՎԱՐԻ 2022 թվականի N 09-Ն
ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ մասի, 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին մասի, 83-94-րդ հոդվածների, «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 32–րդ հոդվածի պահանջներով, ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հաստատել Ծաղկահովիտ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեն՝
ա) 2022 թվականի տարեկան բյուջեի վարչական մասի եկամուտների գծով՝ 414 311 200 (չորս հարյուր տասնչորս միլիոն երեք հարյուր տասնմեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ,

բ) 2022 թվականի տարեկան բյուջեի վարչական մասի ծախսերի գծով՝ 418 362 470,9 (չորս հարյուր տասնչորս միլիոն երեք հարյուր վաթսուներկու հազար չորս հարյուր յոթանասուն դրամ իննսուն լումա) ՀՀ դրամ,

գ) 2022 թվականի տարեկան բյուջեի ֆոնդային մասի եկամուտների և ծախսերի գծով՝ 131 388 164,1 (մեկ հարյուր երեսունմեկ միլիոն երեք հարյուր ութսունութ հազար մեկ հարյուր վաթսունչորս դրամ տաս լումա) ՀՀ դրամ,
դ) 2022 թվականի տարեկան բյուջեի ընդհանուր ծախսերի գծով՝ 478 750 635 (չորս հարյուր յոթանասունութ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար վեց հարյուր երեսունհինգ) ՀՀ դրամ,

2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտներն ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1–ի.

3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի.
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3–ի.

5. Հաստատել համայնքի 2021 թ-ի
բյուջեի տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն հատված 4-ի,

6. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն հատված 5-ի,
7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6–ի,
8. «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33–րդ հոդվածի 3–րդ կետի համաձայն՝
ա) թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի

նախատեսված հոդվածների միջև.

բ) սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 10 % -ը:

Կողմ - 9 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՆՏՈՆՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԳԱՐԵԳԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻՇԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԵՎԱԿ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԷԴԳԱՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՉԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱՀԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ